



ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱՐՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՑՈՑ

ՄԵՐ ՀԱՐԱԶԱՏ ԼԵԶՈՒ *

«Թող բարձր և խորիս ննջ նայ լեզան ամենուրեք»:
(«ՃՄԻԱԾԻՆ»)


այ գաղթաշխարհի ամենալուրջ ու-
շաբրության արժանի հոդված մը
լույս տեսավ մեր Մայր Արքով
պաշտօնաքերը «է շ մ ի ա ծ ի ն ա ի
մարտ-ապրիլ 1949-ի համարին մեջ, «Մի
ծանրակշիռ խնդրի շուրջ» խորագրով, նայ
լեզուն գաղութեներու մեջ կենդանի պահելու
անհրաժեշտության վերաբերյալ, Ամերիկա-
յի Հայոց Առաջնորդարանի «Հայաստան-
յաց Եկեղեցի» հանդեսին մեջ, 1948 թվակա-
նի հոդվածի մը հրատարակության առթիվ:

Տրված ըլլալով խնդրույն կենսական
կարեռությունը Սփյուտքի հայության հա-
մար, պարտ կզգանք քութին հանձնելու
ժամանակ մը ճշտումներ և դատումներ, նայ լե-
զուն արտասահմանի մեջ կենդանի պահելու
նվիրական գործին նկատմամբ:

Ռումանիայ գաղութը ևս մտահոգված է
մայրենի լեզվի պահպանման խնդրով, մա-
նականդ որ իր աշխին առջև ունի Անդի գաղ-
թականության տիտուր պատմությունը, ուր
թե 80—100 տարի առաջ հանի մը տասնյակ
հազարներու հասնող ժողովուրդ մը կիազ-
մեր, իր Եկեղեցիներով, կալվածներով, մշա-

* Առանձին հաճույքով վերահրատարակում ենք Վե-
հափառ Հայրապետի պարզապետության ժամանակ
գրված այս արժեքավոր հոդվածը, իր այժմեականու-
թյան համար, վերցնելով այն «Եղմիածին» ամսագրի
1950 թվականի մարտ-ապրիլ համարից: — ԽՄԲ:

կութային-բարոյական հաստատություննե-
րով, սակայն վերջին հարյուրամյակի ըն-
թացքին այդ ժողովուրդը ուժացավ, նալեցավ
և կորսվեցավ: Այսօր կգտնենք միայն անհնց
մնացորդները, քանի մը հարյուր հոգի, ցր-
ված երկոտասնյակ մը բաղաբներու մեջ,
որոնք տակավին նայ ծագում ունենալու զի-
տակցությունն ունին և ինքնինքնին կկոչեն
«լուսավորչական ոռումնեներ», որոշ կապ
պահելով մեր Եկեղեցին նետ:

Ակենքն է սակայն թե, եթե Ռումանիու մեջ
շըլլար ներկայությունը նոր թրքանայ գաղ-
թականության, այդ նին հայության մնա-
ցորդներն ալ կորսված կրլային առանց
հետքի:

Մոլդավիո երեմնի հայաշատ կեդրոն-
ներու մեր տասնյակ Եկեղեցիները, վանքե-
րը, Եկեղեցապատկան շենքերը, այսօր գրեթե
դատարկ և անկենդան, միակ վկաներն են
հին հայության անցյալ փառքին: Մնացյալը
խոր լուրջուն է....:

Պատմությունը մեզի կորսվեցնե, թե այս
իրազության պահանաներն զիսավորներն են.

ա) Մայր Երկրի, Հայ Հայրենիքի նետ կեն-
դանի կապի պակասը.

բ) Մայր Արքու Ս. Էջմիածնեն քածնվիլլ
կամ անոր նետ սերտ հարաբերությանց պա-
կասը.

գ) Հայ լեզվի կորուսոր:

Հեհաստանի և Տրանսիլվանիո նոծ քվով հայությունը իր նոզին, իր լիզուն և դիմագործությունը կորսնցուց իրեւ ուղղակի ճետավանք Մայր Արքունք, Հայաստանյայց Եկեղեցին բաժնվելուն և Պապական անհարազատ Եկեղեցին գիրկը իյեալուն:

Հայ Եկեղեցին և Ծողովուրդը երբ կարեցին կապերը Մայր Եւկրեն և Մայր Աքռունք, այլևս անզոր դարձան պահելու հայ ծողովուրդի ազգային ինքնուրույնությունը:

Պապական Եկեղեցին իր սխալ հասկցած համարքիստոնեական միություն ստեղծելու կոսմոպոլիտ գաղափարախոսությամբ, սպանեց մեր ծողովուրդի ազգային ողին:

Մոլովիս և Բուքովինայի հայությունը դիմադրեց ԺԵ դարու դավանափոխության հոսանքին և մեաց հավատարիմ Ս. էջմիածնին: Այս կերպով ան պահեց իր ինքնուրյունը, իր լեզուն և մշակույրը մինչև գրեթե ԺԵ դարու վերշեցը: Սակայն ինչ-ինչ պատճառներու բերմամբ, այդ շրջանին չկրցած իր կապը պահպանել Մայր Աքռոնի հետ, չունեցավ բեմակալ առաջնորդներ, թեև բռնը Եկեղեցիները չեն և պայծառ վիճակի մեջ եղան միշտ, բազմաթիվ բահանաներով, չկրցավ պահպան կենդանի պահել մայրենի լեզուն և կորսնցուց իր ազգային դիմագիծը:

Արդ, երե կկամենանք, որ մեր այսօրվան գաղութները նույն վախճանը չունենան, ամեն զնով և բոլոր միջոցներով պետք է պահպանենք հայ լեզվի կենդանի: Գործածությունը Հայաստանյայց Եկեղեցին մեջ և Եկեղեցին դրու մեր առօրյա կյանքին մեջ, հայկական հայրենասիրության ոգիով պաշտոնդաված:

Հեռու մեզմե այն մոլորությունը, թե առանց հայ լեզվի կրնանք հայությունը կենդանի պահել միայն կրոնելով ու Եկեղեցական պաշտամունքով:

Ժողովուրդի մի կյանքին մեջ, լեզուն լոկ «իր անքրուվար ծառայող» գոյություն մը չէ: Լեզուն կենդանի մարմին մըն է, օրգանիզմ մը, ժողովուրդի նույգերեն և մտածումներեն ծնած, զարգացած ու ծաղկած, ան մշտառ կենդանության և անման մեջ զանովով և ինքն ալ իր կարգին այդ ժողովուրդին յաւանատուկ զգայնությունը, մտածելու կերպը, նոգեկան

Եկարագիրը պահելու պաշտամն ունեցող կենդանի ուժն է:

Ամեն անհատ կզաք ու կմտածե այն լեզվով, զոր կխոսի իր մայրենի լեզու: Ամեն անհատ իր ազգակիցներու հետ կրնա հաւկրցվի մահավանդ մայրենի լեզվով:

Հոգին, զիտակցությունը անկախ չեն խոսված լեզվեն: Այս վերշինը իր գրոշմը, իր գույնը, իր կաղապարները, իր շոնչը կապարքեր մտածումին և զգացումին:

Լեզուն ժողովուրդի մը նոզեծին ուղին է, որ հասունության հասնելով, իր ծնողիր կապան, կապանան և կառաջնորդի:

Հայաստանյայց Եկեղեցին անշուշտ որ գաղութներուն մեջ վնասական դեր ունի հայապահպանման գործի մեջ, պայմանով սակայն, որ հայ լեզուն կենդանի պահվի անոր մեջ և անոր կողքին: Վասնզի երե լեզուն մողցի, ինքը Եկեղեցին ալ կուծանա, անարյուն իրականության կիերածվի ազգային տեսակետե: Առանց մայրենի լեզվի, հայ հավատացյալը անխոսափելի կերպով կկարսնեն իր հայու նոզին, ազգային ուրուն դիմագիծը ու ինքնուրույնությունը:

Լեզուն հավիտենական ճշմարտություն է, կենդանի ուժ և արծեն այն իմաստով, որ կապանով ժողովուրդի հավիտենականությունը:

Մանոք է բոլորին, թե ինչպես ֆրանսացիք հպարտությամբ կըսնեն. «Ֆրանսան՝ այդ ֆրանսերեն լեզուն է»:

Լեզուն կենդանի իրականություն մըն է, որ կյանք կառնե ժողովուրդին և կյանք կուտա անոր. այս, ան կրնա մեռնիլ, բայց իր հետ կրազի և այդ ժողովուրդը ուղես ազգային ամբողջություն, կրազի նաև անոր մշակույթը:

Երե Ե դարու մեր Երշանկանիշատակ հայսնիք Հայ Եկեղեցին շտային սեփական լեզու, զիր ու գրականություն, մեր Եկեղեցին վատանարաց շատոնց ի վեր կորսնցուցած կըլլար իր ազգային նկարագիրը, իր անկախությունը և իր գոյությունն իսկ:

Անա թե ինչ կգեն այս մասին մեր Վեհափառ Հայրապետը, «Հայոց Եկեղեցին» նողածին մեջ. «Հայ Եկեղեցին, որ իր առաքելական ծագմամբ ինքնազնով է, դարձավ կատարելապիս ազգային, երբ ներսէ Մեծի

որդին՝ Սահմակ կարսղիկոս և Մեսրոպ Մաշտոց հայ տառերը հնարեցին, Ս. Գիրքը հայրենի բարգմանեցին և նետզմենտ ստեղծվեցալ Ե դարի հայ կլասիկ գրականությունը։ Այդ օրվանից հայ լեզվի և Հայ նկեղծուութիւնը միամյուավեցին և նրանք համընթաց բայլեցին։

Խորքին մեջ ժողովուրդ, Հայրենիք, սեփական լեզու և մշակույր մեկ անբաժանելի ամբողջություն կկազմեն, կարելի չէ երկար ժամանակ մեկը պահել առանց մյուսին։ Ամեն ժողովուրդ այն շափով է ժողովուրդ, ինչ շափով որ ան ունի սեփական երկիր, սեփական լեզու, մշակույր և ինքնավար հավաքական կյանք։

Երջանկություն է մեզ բոլորիս համար հաստատել՝ թե այսօր, երկար ու լուայլ ալեկոն պատմության մը նորձանեներեն վերջապես ազատագրված հայ ժողովուրդը, իր նորաստեղծ, ճարագաս պետության՝ Սովոտական Հայաստանի մեջ, վերագտած է և ամուս կերպով հաստատած իր ազգային կյանքի ու զարգացման բոլոր հիմնական պայմանները։

Հայ ժողովուրդը փրկված է այլես, կմնա Սփյուռքի մեջ ցրված մեր ժողովուրդի զա-

վակներու պամպանման և փրկության հարցը։

Տարակոյս պետք չէ ունենալ, թե Մայր Հայրենիքին դուրս, զաղութային պայմաններու մեջ, աննար է հայր հայ պահել տեսկանորեն և լրիվ կերպով, սակայն մինչև մեր ժողովուրդի ամրողական վերադարձ դեպի Մայր Հայրենիք, բոլորիս սեպում պարտականությունն է մեր եկեղեցիներու կողքին հիմնել հայրենասիրական մշակութային հաստատություններ և մեր նախանայրերու հավատքին հետ միասին և նոյն սրբության զգացամով պահել ու ապրեցնել մեր մայրենի մեծասիան լեզուն, զոր նաիրի Զարյան արդար հպարտությամբ կկոչեն «Հերոսական լեզուների հերոս եղբայր, հայոց լեզու»։

Այսօր մանավանդ, երբ հայ ժողովուրդը իր վերածնած, հասակ նետող և օրե օր անող սեփական Հայրենիքը ունի, սովետական մեծ ու ազատ եղբայրության աշխարհի մեջ, Սփյուռքի մեջ հայ լեզուն, հայ նոզին, հայ հայրենասիրությունը կենդանի ու վաս պահելու նվիրական գործը Հայ եկեղեցիներու պատմական սեպում պարտականությունն է և թե՛ անոր բոլոր սպասավորներուն թե՛ պատմական սեպում պարտականությունն է և թե՛ անոնց ազնիկ հպարտությունը։

